ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

# ՄԱՅՐԵՆԻ

## 2-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

## *1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՆՅՈՒԹԵՐ*

2021

## ԿԵՍ ԽՆՁՈՐ (էջ 8 - 4 ժամ)

Հարցեր՝

- Նորեկ աշակերտուհին ինչու՞ էր հուզված: Ի՞նչն էր պակաս նրա համար:
- Ուսուցչուհին ի՞նչ զգաց, երբ Հուրիկին տեսավ Սեդայի կողքին:
- Սեդան իսկապե՞ս կես խնձորով ձեռք բերեց իր մտերիմ ընկերուհուն, թե՞…
- Ինչպե՞ս կվարվեիր դու, եթե լինեիր Հուրիկի փոխարեն:
- Ի՞նչ զգաց Սեդան, երբ Հուրիկը նրան կես խնձոր տվեց:
- Դու ունե՞ս ընկերներ: Ի՞նչն ես կարևորում ընկեր ընտրելիս:
- Ի՞նչ է տալիս ընկերությունը մարդուն: Հե՞շտ է պահել ընկերությունը:
- Ու՞մ ընկերը կդառնայիր՝ Սեդայի՞, թե՞ Հուրիկի: Հիմնավորի՛ր ընտրությունդ:

Առաջադրանքներ՝

- **Տրված բառերը տեղավորի՛ր սյունակներում՝ ըստ պահանջվող հարցերի:**

Աշակերտ, խմբվել, աշակերտուհի, աղջիկ, վազել, դուռ, աչք, թողնել, խնձոր, Սեդա, Հուրիկ, ընկերուհի:

| Ո՞վ, ովքե՞ր | Ի՞նչ, ինչե՞ր | Ի՞նչ անել |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |

- **Գունավորի՛ր կես խնձորը, վրան նշի՛ր ընկերոջդ անունը, ապա կտրի՛ր և նվիրի՛ր նրան…**



➢ Տետրում արտագրի՛ր պատմվածքից քեզ դուր եկած հատվածը և շարունակի՛ր քո տարբերակով…

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

______________________________________________________________________

➢ Տեքստից դու՛րս գրիր Սեդային և Հուրիկին նկարագրող բառերը:





- **Ստեղծի՛ր երկխոսություն քո բառերով՝ Հուրիկի և Սեղայի միջև: Պատմի՛ր՝ հորինելով ինչ եղավ հետո:**

______________________________________________________________

______________________________________________________________

______________________________________________________________

______________________________________________________________

______________________________________________________________

______________________________________________________________

- **Տրված բառաշարքից ընտրի՛ր այն գործողություն ցույց տվող բառերը, որոնք կօգտագործեիր, երբ Սեղան գար քո դասարան:**

Ողջունել, անտեսել, բարևել, արհամարհել, ժպտալ, հյուրասիրել, խոսել, հեռանալ, մոտենալ, օգնել:

______________________________________________________________

______________________________________________________________

- **Տեքստը բաժանի՛ր տրամաբանական մասերի և ներկայացրու՛ համապատասխան պատկերի միջոցով:**



## ՀՐԱՇԱԼԻ ԲԱՌԸ (էջ 72 – 76) – 5 ժամ

Մի օր Խնդրեմն ու Շնորհակալությունը հանդիպեցին, և ամեն մեկը սկսեց դժգոհել իր բախտից:

- Ոչ մեկը մեզ չի գնահատում և չի հարգում:

Այդ ժամանակ նրանց է միացավ Ներեցեքը:

- Ներեցե՛ք, որտե՞ղ է արդարությունը. մյուս բոլոր բառերը հանգիստ ապրում են, իսկ մենք անդադար աշխատում ենք: Մեզ միշտ հիշում են՝ է՛լ շնորհակալություն, է՛լ խնդրեմ, է՛լ ներեցեք, նույնիսկ չեն թողնում հանգիստ քնենք:

- Շնորհակալություն, բայց արդարություն չկա,- համաձայնեց Շնորհակալությունը,- մեր փողոցում մի կին է ապրում: Նա իր աղջկան միշտ ասում է՝ ասա՛ շնորհակալություն, ասա՛ շնորհակալություն…

Հաստատ գիտեմ՝ մինչև մեծանալը աղջիկը կմոռանա, թե ինչ է «շնորհակալությունը»:

- Ես էլ եմ նույն վիճակում,- հոգոց է հանում Խնդրեմը,- ավտոբուսում, փողոցում միայն լսում ես՝ փոխանցե՛ք խնդրեմ, մեկ տոմս խնդրեմ: Իհարկե, ես հասկանում եմ, դա քաղաքավարություն է, բայց բոլորովին ուժերս հատել են:

Խնդրեմը խոսելով հետ - հետ գնաց, որպեսզի նստի, բայց պատահմամբ կանգնեց Շնորհակալության մեջքին:

— Վա՛յ, ների՛ր ինձ:

- Հիմա էլ՝ դու՞,- բարկացավ Ներեցեքը,- չե՞ս կարող առանց ինձ յոլա գնալ:

— Ների՛ր, ես պարտավոր էի ներողություն խնդրել:

— Նորի՞ց… Չէ, պետք է մի բան անել: Եկե՛ք մի շաբաթով գնանք ծով՝ հանգստանալու: Կլողանք, կխաղանք և ոչ մի աշխատանք: Թող մեկ շաբաթ մարդիկ առանց մեզ դիմանան:

Այդպես էլ արեցին: Իսկ երբ վերադարձան, նույնիսկ ուրախացան՝ լսելով, թե ինչպես են բոլորը անդադար կրկնում իրենց անունները:

Եվ կարևորը՝ նրանք արդեն տեղին էին օգտագործում այդ բառերը. երբ ուզում էին, որ իրենց ներեն, ասում էին՝ ՝ներեցեք, երբ ուզում էին շնորհակալություն հայտնել, ասում էին՝ շնորհակալ եմ, իսկ երբ ուզում էին քաղաքավարի լինել, ասում էին՝ խնդրեմ:

Ընկերներն այժմ նույնիսկ գիրք կարդալու ժամանակ ունեին և ամեն տարի մեկ շաբաթով գնում էին ծով՝ հանգստանալու:

Հարցեր՝

- Քանի՞ հերոս է գործում տեքստում:
- Ինչու՞ էին բոլորը վատ վարվում Սաշայի հետ: Ինչպիսի՞ն էր Սաշան: Բնութագրի՛ր:
- Գնահատի՛ր Սաշայի արարքները: Ի՞նչ եք կարծում, իրո՞ք ոչ ոք չէր սիրում Սաշային:
- Սաշան ինչի՞ շնորհիվ փոխեց իր վերաբերմունքը:
- Ինչպիսի՞ն էր ծերունին: Բնութագրի՛ր:
- Պատահե՞լ է քեզ հետ նման դեպք, ե՞րբ քեզ չեն հասկացել: Պատմի՛ր
- Կա՞ տեքստում այնպիսի մի բան, որը քեզ զարմացրեց ու ստիպեց մտածել: Ի՞նչ դաս քաղեցիր այս պատմությունից:

Առաջադրանքներ՝

- **Ամբողջացրու՛ նախադասությունները.**

Այս պատմվածքից ես սովորեցի, որ ________________________________________:
Սաշան լաց էր լինում, որովհետև ________________________________________:
Ծերունին Սաշային օգնեց, որովհետև ______________________________________:

- Պատմի՛ր՝ պատմվածքի բովանդակության մեջ ընդգրկելով մեկ այլ հերոս:

- Գրի՛ր տեքստի *սպիտակ, կոպիտ, գոռացել, հրաշալի* բառերին իմաստով մոտ բառերը: Դրանք օգտագործի՛ր նախադասությունների մեջ:

____________________________________________________________
____________________________________________________________
____________________________________________________________
____________________________________________________________
____________________________________________________________
____________________________________________________________
____________________________________________________________
____________________________________________________________

- Հորինի՛ր երկխոսություն Սաշայի և քույրիկի միջև:

Սաշա - ____________________________________________

Քույրիկ - ____________________________________________

Սաշա - ____________________________________________

Քույրիկ - ____________________________________________

Սաշա - ____________________________________________

Քույրիկ - ____________________________________________

Սաշա - ____________________________________________

Քույրիկ - ____________________________________________

- Շարունակի՛ր տեքստը, ի՞նչ պատահեց հետո:
- Փորձի՛ր նկարով պատկերել Սաշայի ընտանիքը: Բաշխել դերերը և թատերական բեմականացմամբ /բառերի և մնջախաղի զուգակցմամբ /ներկայացնել տեքստի բովանդակությունը:
- Գրի՛ր փոքրիկ նամակ-խորհուրդ Սաշային:



---------------------------------------------------------------------------

---------------------------------------------------------------------------

---------------------------------------------------------------------------

---------------------------------------------------------------------------

---------------------------------------------------------------------------

---------------------------------------------------------------------------

---------------------------------------------------------------------------

---------------------------------------------------------------------------

---------------------------------------------------------------------------

---------------------------------------------------------------------------

---------------------------------------------------------------------------

✓ Գծով իրա՛ր միացրու տրված բառերին իմաստով մոտ կամ ընկեր բառերը:

| | |
|---|---|
| խմել | զայրանալ |
| բարկանալ | ըմպել |
| ծիծաղել | գնել |
| առնել | փաղաքշել |
| փայփայել | քրքջալ |

✓ Տեքստի օգնությամբ լրացրո՛ւ բառերի հատկանիշները:

……………………… դեմք

………………………մորուք

………………………ձայն

………………………բառ

………………………բլիթներ

## ՊԱՐՍԱՏԻԿԸ (էջ 76) - 3 ժամ

Հարցեր՝

- Ովքե՞ր են պատմվածքի հերոսները: Քո կարծիքով՝ քանի՞ տարեկան էին նրանք: Հիմնավորի՛ր:
- Ինչպե՞ս կվարվեիր դու Ջոնիկի փոխարեն:
- Ջոնիկին Լևոնի կատարած ո՞ր արարքները դուր չէին գալիս:
- Ի՞նչ պատահեց սահնակով սահելիս: Ինչպե՞ս վարվեց Ջոնիկը: Ինչու՞:
- Ի՞նչ զգացողություններ ունեցաք, երբ Լևոնը պարսատիկով հարվածում էր ճնճղուկներին: Լևոնը հասկացա՞վ իր սխալը: Մեկնաբանի՛ր:
- Քո կարծիքով ո՞ր ընկերը կամաչի: Հիմնավորի՛ր:
- Գնահատի՛ր երկու ընկերների արարքները:
- Կա՞ տեքստում այնպիսի մի բան, որը քեզ զարմացրեց կամ զայրացրեց: Կա՞ մի բան, որի հետ համաձայն չես:
- Այս պատմվածքը կյանքի ի՞նչ դասեր տվեց քեզ:

Առաջադրանքներ՝

- ✓ **Ի՞նչ զգացողություններ ունեցար: Շարունակի՛ր նախադասությունները.**

Ես զգացի ______________________________ :
Այս պատմվածքից ես սովորեցի, որ ______________________________ :
Գրի՛ր փոքրիկ նամակ Լևոնին կամ Ջոնիկին:



✓ **Ըստ տեքստի ՝ լրացրու՛ հետևյալ նախադասություններում բաց թողած բառերը.**

Լևոնը խփում էր ճնճղուկներին, իսկ _______________ կանգնում էր նրա կողքին ու տխուր նայում:
Չոնիկը սահնակ ուներ, իսկ __________________ չուներ:
Լևոնը նայեց Չոնիկի հետևից, նայեց _______________ տխրեց:

✓ **Գրի՛ր փոքրիկ պատմություն՝ «Ինչո՞վ եմ օգնում կենդանիներին» վերնագրով:**

----------------------------------------------------------------------------------------------------
----------------------------------------------------------------------------------------------------
----------------------------------------------------------------------------------------------------
----------------------------------------------------------------------------------------------------
----------------------------------------------------------------------------------------------------
----------------------------------------------------------------------------------------------------
----------------------------------------------------------------------------------------------------
----------------------------------------------------------------------------------------------------

Թագ, այծիկ, հավանոց, դուռ, մայրենի, արջ, նկարչուհի, սար, արև, տնակ:

| պարզ |ածանցավոր |
|---|---|
| | |
| | |
| | |
| | |

✓ **Գծով միացրո՛ւ աջ և ձախ սյունակների համապատասխան իմաստով իրար մոտ բառերը:**

| | |
|---|---|
| խալի | կատակ |
| ջարդել | հագուստ |
| հանաք | արթնանալ |
| շոր | կոտրել |
| զարթնել | գորգ |

## ՊԱՅՄԱՆ (էջ 79) - 3 ժամ

Հարցեր՝

- ✓ Ի՞նչ անուններ կդնեիր հերոսներին:
- ✓ Կարող ես, ըստ թեմատիկ նկարի, որոշել ընկերներ դարձած տղաների տարիքը:
- ✓ Ըստ բնագրի՝ ինչ որոշեցին ընկերները, կարդա այդ հատվածը:
- ✓ Իսկ դու ընկերներ ունե՞ս: Ի՞նչ ես կարծում ընկերությունը պայմաններ սիրո՞ւմ է:
- ✓ Ի՞նչ ես կարծում, հնարավո՞ր է ընկերություն ստեղծել մեծերի կամ ավելի փոքրերի հետ: Հիմնավորի՛ր:
- ✓ Ի՞նչ խորհուրդ կտայիր ընկեր փնտրող տղային:

Առաջադրանքներ՝

- Սյունակում գրված առարկա ցույց տվող բառերը դարձրու՛ գործողություն ցույց տվող բառեր:

| Առարկա ցույց տվող | Գործողություն ցույց տվող |
|---|---|
| բարև | բարևել |
| խաղ | |
| եղբայր | |
| ծանոթ | |
| ընկեր | |

- ✓ Պատրաստի՛ր նմանատիպ ձեռք, վրան նշի՛ր ընկերոջդ անունը և նվիրի՛ր նրան՝ գրելով երկտող:





✓ Պատկերի՛ր մտերիմ ընկերոջդ և գրիր նրա այն հատկանիշների մասին, որոնք քեզ ամենաշատն են դուր գալիս:

------------------------------------------------------------

------------------------------------------------------------

------------------------------------------------------------

------------------------------------------------------------

------------------------------------------------------------

- **Կարդա՛ մեկ այլ պատմություն ընկերների կամ ըմկերության մասին և քննարկիր դասարանում:**

| **Առակ ընկերոջ մասին** |
| --- |
| Մի անգամ անապատում երկու ընկեր կռվեցին և մեկը մյուսին ապտակ հասցրեց: Վերջինս, ցավ զգալով, բայց ոչինչ չասելով՝ գրեց ավազի վրա. «Այսօր իմ ամենալավ ընկերն ինձ ապտակեց»: Շարունակեցին ճանապարհը, գտան օազիս և որոշեցին լողանալ: Նա, ով ապտակ էր ստացել, փրկվեց խեղդվելուց, ընկերը փրկեց նրան: Երբ ուշքի եկավ, գրեց քարի վրա. «Այսօր իմ ամենալավ ընկերը փրկեց իմ կյանքը»: Նա, ով ապտակ էր հասցրել և փրկել էր ընկերոջ կյանքը, հարցրեց. |
| - Երբ քեզ ապտակեցի, դու ավազի վրա գրեցիր, իսկ հիմա՝ քարի վրա: Ինչու՞: Ընկերը պատասխանեց. |
| - Երբ մեզ նեղացնում են, մենք պետք է ավազի վրա գրենք, որպեսզի քամիները կարողանան ջնջել: Իսկ երբ մեզ լավություն են անում, պետք է քարի վրա գրել, որպեսզի ոչ մի քամի չկարողանա ջնջել: |

- Դիտի՛ր այս հոլովակը և համեմատի՛ր աղվեսին ու գայլին, լրացրու՛ աղյուսակը. https://youtu.be/kbKVKORYJ3o





| Աղվես | Գայլ |
| --- | --- |
| | |
| | |
| | |
| | |
| | |

## ԾԱՌԱՏՈՒՆԿ (էջ119) - 2 ժամ

Հարցեր՝

- ✓ Քո կարծիքով՝ ինչո՞ւ է կարևոր ծառ տնկելը: Տեքստից նոր տեղեկություն ստացա՞ր ծառ տնկելու մասին: Դու երբևէ ծառ տնկե՞լ ես: Պատմի՛ր:
- ✓ Փորձի՛ր երևակայել՝ ե՞րբ է ծառը զոհ ժպտում: Ինչու՞:
- ✓ Ինչպե՞ս էին երեխաներն աշխատում: Ներկայացրու՛ և գնահատի՛ր նրանց կատարած աշխատանքը:
- ✓ Կարո՞ղ ես ասել, թե տարվա որ եղանակին և որ ամսում են կատարվում բանաստեղծության մեջ նկարագրվող իրադարձությունները:
- ✓ Ինչպիսի՞ ծառերի տեսակներ գիտես: Թվարկի՛ր:
- ✓ Քո կարծիքով՝ ի՞նչ ծառ էին տնկում երեխաները:
- ✓ Ո՞ր քառատողը քեզ դուր եկավ: Ինչո՞ւ:
- ✓ Ինչպիսի՞ տրամադրություն առաջացրեց քո մեջ բանաստեղծությունը:
- ✓ Բացատրի՛ր՝ ինչու՞ են բոլորն ուրախանում ծառ տնկելով:
- ✓ Ի՞նչ է սովորեցնում այս բանաստեղծությունը:
- ✓ Ընկերոջդ հետ միասին փոխի՛ր բանաստեղծության բովանդակությունն այնպես, որ այն այլ ավարտ ունենա: Պատմե՛ք մյուսներին:

Առաջադրանքներ՝

- ✓  Օգտվելով տեքստից՝ գրի՛ր ծառատունկի ժամանակ կատարվող գործողությունների հաջորդականությունը և համարակալի՛ր:

- ❑ ---------------------------------------------
- ❑ ---------------------------------------------
- ❑ --------------------------------------------
- ❑ ---------------------------------------------
- ❑ --------------------------------------------
- ❑ ---------------------------------------------
- ❑ ---------------------------------------------

- ✓  Դու՛րս գրիր բանաստեղծության՝ քո կարծիքով կարևոր տողերը:

-----------------------------------------------------------------
-----------------------------------------------------------------
-----------------------------------------------------------------
-----------------------------------------------------------------

✓  Գրի՛ր նամակ բանաստեղծության երեխաներին, խորհու՛րդ տուր նրանց՝ ինչպես անեն, որ իրենց տնկին դառնա հզոր ծառ։

Սիրելի՛ երեխաներ, դուք պետք է -----------------------------------------------
-------------------------------------------------------------------------------------------
-------------------------------------------------------------------------------------------
-------------------------------------------------------------------------------------------
-------------------------------------------------------------------------------------------
-------------------------------------------------------------------------------------------
-------------------------------------------------------------------------------------------
-------------------------------------------------------------------------------------------
------------------------------------------------------------------------------------------

## ԴՈՒ Ի՞ՆՉ ԵՍ ԱՐԵԼ (էջ 127) - 2 ժամ

*Հարցեր՝*

- Ինչպիսի՞ն էր աշխարհը:
- Ի՞նչ խրատ է տալիս հեղինակը քեզ:
- Բնության ինչպիսի՞ երևույթների մասին է խոսում հեղինակը:
- Խոսի՛ր քո կատարած բարի և օգտակար գործերից:
- Կարևո՞ր է արդյոք ծառ տնկելը, ծաղիկ ջրելը, մեկին օգնելը: Ինչու՞:
- Երբևէ սուտ խոսե՞լ ես, ո՞րն է եղել պատճառը:
- Սիրու՞մ ես թռչուններ: Ի՞նչ օգտակար բան ես արել նրանց համար:
- Ինչու՞ է հեղինակն ասում, որ դեռ կհասցնես անել: Բացատրի՛ր:
- Իսկ ի՞նչ ես ուզում անել ապագայում: Մեկնաբանի՛ր:
- Կա՞ բանաստեղծության մեջ մի բան, որը քեզ զարմացրեց:
- Ո՞րն է բանաստեղծության հիմնական ասելիքը: Ինչի՞ մասին այն ստիպեց մտածել:
- Ի՞նչ նմանություններ և ընդհանրություններ կան բնագրի և թեմատիկ նկարի միջև:
- Պատկերացրո՛ւ՝ արևին, ծաղկին, ծառին հրավիրում ես պարահանդեսի: Դիմի՛ր նրանց խնդրանքով: Ինչպե՞ս կդիմես, որպեսզի նրանք խնդրանքդ չմերժեն:

**Առաջադրանքներ՝**

- Հորինի՛ր մի երկխոսություն բնության և մարդու միջև: Գրի՛ր այն:

Մարդ - ____________________________________________

Բնություն - ____________________________________________

Մարդ - ____________________________________________

Բնություն - ____________________________________________

Մարդ - ____________________________________________

Բնություն - ____________________________________________

Մարդ - ____________________________________________

Բնություն - ____________________________________________

- Իսկ դու օգնո՞ւմ ես թռչուններին: Գրի՛ր փոքրիկ պատմություն:

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

________________________________________________________________________________

- Աղյուսակի սյունակներում գրի՛ր, թե ինչպիսին է քո կարծիքով՝

| Ինչպիսի՞ | |
|---|---|
| | աշխարհ |
| | բալիկ |
| | Արև |
| | ծիտ |
| | ծաղիկ |
| | սուտ |

- Ամբողջացրո՛ւ նախադասությունները.

Աշխարհը կանաչ է, որովհետև ________________________________________:
Արևը կարմիր է, որովհետև ________________________________________:
Ծառը հաստաբուն է, որովհետև ________________________________________:
Ծաղիկը գեղեցիկ, անուշահոտ է, որովհետև ______________________________:
Փոքրիկը խելացի է, որովհետև ________________________________________:
Ստի ոտքերը կարճ են, որովհետև ______________________________________:
Եթե բարի սիրտ ունես, ուրեմն ________________________________________:

- Հորինի՛ր բանաստեղծության շարունակությունը՝ ավելացնելով ևս մեկ քառատող: Կարող ես բնության այլ երևույթներ ևս ավելացնել բանաստեղծության մեջ:

____________________________________________________

____________________________________________________

____________________________________________________

____________________________________________________

- Բանաստեղծությունից դու՛րս գրիր առարկա, հատկանիշ, գործողություն ցույց տվող 4-ական բառ և տեղադրի՛ր սյունակներում:

| Առարկա | Գործողություն | Հատկանիշ |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |
| | | |

- Գծով միացրու՛ համապատասխան հոմանիշ բառերը:

| | |
|---|---|
| դրացի | կայտառ |
| աշխույժ | հարևան |
| սապոն | տանիք |
| հանաք | օճառ |
| կտուր | կատակ |

## ԱՐԾԻՎՆ ՈՒ ՀՈՎԻՎԸ (էջ125 – 126) - 3 ժամ

**Հարցեր՝**

- Փոքրիկ հովիվն ի՞նչ բարի գործ կատարեց:
- Բնութագրի՛ր Վաչիկի վերաբերմունքը, երբ նա խնամում էր արծվին:
- Արծիվն ինչպե՞ս հայտնեց իր «շնորհակալությունը»:
- Ինչու՞ է հեղինակը Վաչիկին անվանում փոքրիկ հովիվ:
- Ինչպիսի՞ն էր փոքրիկ հովիվը: Կուզենայի՞ր ընկերություն անել նրա հետ: Ինչու՞:
- Եթե դու լինեիր Վաչիկի փոխարեն, ինչպե՞ս կվարվեիր:
- Բնութագրի՛ր արծվին՝ նշելով արտաքին տեսքը, բնավորությունը:
- Համեմատի՛ր տեքստի արծվին քեզ ծանոթ այլ ստեղծագործությունների արծիվների հետ:
- Պատմի՛ր տեքստը՝ բովանդակության մեջ ավելացնելով նոր հերոս՝ **մարդ, թռչուն** կամ **կենդանի**:
- Ի՞նչը քեզ դուր եկավ պատմվածքում: Ինչու՞:
- Մտածի՛ր նոր վերջաբան: Ի՞նչ կլինի հետո:
- Իսկ դու օգնու՞մ ես թռչուններին կամ կենդանիներին: Ինչպե՞ս:

**Առաջադրանքներ՝**

- **Նկարի՛ր տեքստի քեզ դուր եկած հատվածը, ներկայացրո՛ւ ընկերներիդ և մեկնաբանի՛ր:**





Հորինի՛ր փոքրիկ պատմություն թեմատիկ նկարի շուրջ, վերնագրի՛ր և գրի՛ր:



Լրացրու՛ աղյուսակը՝ ի՞նչ գիտեիր արծիվների մասին և ի՞նչ իմացար:

| Գիտեի | Սովորեցի |
|---|---|
| | |
| | |
| | |
| | |
| | |
| | |



Ամբողջացրո՛ւ նախադասությունները՝ օգտվելով տեքստից:

Վաչիկն իրենց ուլիկները տանում էր մոտակա սար, որ -------------------------------- :

Փոքրիկ հովիվը փրկեց արծիվին, որովհետև ------------------------------------------- :

Արծիվը փրկեց Վաչիկին օձից, որովհետև ---------------------------------------------- :

Վաչիկը գրկել էր արծվին ու շոյում էր նրա թևերը, մեջքը, որովհետև ---------------------:



Ընկերոջդ հետ միասին հորինի՛ր մի երկխոսություն արծվի և Վաչիկի կամ ուլիկի և Վաչիկի միջև: Երկխոսությունը բեմադրե՛ք դասընկերների համար:



Պատմվածքից դո՛ւրս գրիր 3-ական առարկա, գործողություն, հատկանիշ ցույց տվող բառեր:

| Առարկա | Գործողություն | Հատկանիշ |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |



Առանձին սյունակներում գրի՛ր տրված պարզ և ածանցավոր բառերը: Ընդգծի՛ր ածանցները:

Օձ, փոքրիկ, անտուն, ժայռ, հյուրանոց, թևեր, դժգոհ, մեջք, ուրախություն:

| Պարզ բառեր | Ածանց*ավոր* բառեր |
|---|---|
| | |
| | |
| | |
| | |
| | |



- Դո՛ւրս գրիր տեքստի ***թեք*** գրված բառերը և գրի՛ր այդ բառերի մոտ իմաստ ունեցող բառերը:

------------------------------------ ----------------------------------------------

----------------------------------- ----------------------------------------------

----------------------------------- ----------------------------------------------

----------------------------------- ----------------------------------------------

---------------------------------- -----------------------------------------------

## ԱՄՓՈՓՈՒՄ

**Հարցեր՝**

- Ի՞նչ բարի գործերի մասին լսեցիր այս թեման ուսումնասիրելիս:
- Ո՞ր դասանյութում նկարագրված բարի գործը դու կկատարես: Ինչու՞:
- Ո՞րն է այս թեմայի՝ քեզ ամենից շատ դուր եկած դասանյութը: Հիմնավորի՛ր ընտրությունդ:
- Ի՞նչը կվերանայես քո բնավորության մեջ կամ արարքներում այս թեման ուսումնասիրելուց հետո: Հիմնավորի՛ր:
- Ո՞վ է քո շրջապատի ամենահոգատար և աշխատասեր մարդը: Կցանկանայի՞ր նմանվել նրան:

**Առաջադրանքներ՝**



- Դու ի՞նչ լավ գործեր ես կատարել: Գրի՛ր դրանցից մեկի մասին:

Մի անգամ ես ---------------------------------------------------------------------------

---------------------------------------------------------------------------------------------

---------------------------------------------------------------------------------------------

---------------------------------------------------------------------------------------------

---------------------------------------------------------------------------------------------

---------------------------------------------------------------------------------------------

---------------------------------------------------------------------------------------------

---------------------------------------------------------------------------------------------

---------------------------------------------------------------------------------------------

Նկարի՛ր այս թեմայի քո ամենասիրելի հերոսին և բնութագրի՛ր նրան առանձին բառերով:

--------------------------------

--------------------------------

--------------------------------

-------------------------------

-------------------------------

-------------------------------

Գրի՛ր այս թեմայի այն հերոսների անունները, որոնք քո կարծիքով այսպիսին են՝

ա. ամենախելացի----------------------------- , դ.ամենաընկերասեր-------------------,

բ. ամենահոգատար----------------------------, ե.ամենաաշխատասեր------------------,

գ. ամենաբարեկիրթ--------------------------, զ.ամենաերախտապարտ---------------

Գրի՛ր թեմայի դասանյութերի մասին՝ շարունակելով նախադասությունները:

Հետաքրքիր էին, որովհետև ------------------------------------------------------------- :

Ես տխրեցի, որ ---------------------------------------------------------------------------- :

Ես ուրախացա, որ ---------------------------------------------------------------------- :

Ես սովորեցի, որ ------------------------------------------------------------------------ :



- Այս թեմայի հերոսներին բաժանի՛ր երկու խմբի: Մի խմբում առանձրացրո՛ւ քո կարծիքով լավ արարքներ կատարած հերոսներին, իսկ մյուս խմբում՝ վատ:

|  |  |
|---|---|
| -------------------------------------------- | ------------------------------------------------ |
| -------------------------------------------- | ------------------------------------------------ |
| -------------------------------------------- | ------------------------------------------------ |
| -------------------------------------------- | ------------------------------------------------ |
| -------------------------------------------- | ------------------------------------------------ |
| -------------------------------------------- | ------------------------------------------------ |



- Յուրաքանչյուր նկարի շուրջ գրի՛ր 1-ական առարկա, գործողություն, հատկանիշ ցույց տվող բառ: Ո՞ր դասանյութերն ես նմանեցնում այս նկարների բովանդակությանը: Հիմնավորի՛ր:







| Առարկա ցույց տվող բառ | Գործողություն ցույց տվող բառ | Հատկանիշ ցույց տվող բառ |
|---|---|---|
| | | |
| | | |
| | | |

- Անցած դասանյութերից հիշի՛ր և գրի՛ր տրված բառերի հակառակ իմաստն արտահայտող բառերը:

վատագույն -----------------------
հիշեցին -----------------------
ուրախացավ -----------------------
կոպիտ -----------------------
հեռու -----------------------

- Տրված պարզ բառերը միացնելով համապատասխան ածանցներին՝ ստացի՛ր ածանցավոր բառեր:

| | | |
|---|---|---|
| գործ | իչ | ------------------------------- |
| ընկույզ | արան | -------------------------------- |
| սրբել | ենի | -------------------------------- |
| դաս | արար | ------------------------------- |

- Գրի՛ր տրված բառերին իմաստով մոտ բառերը՝ հիշելով թեմայի հերոսների բնութագրերը:

| | |
|---|---|
| չարաճճի | --------------------------- |
| անշնորհք | --------------------------- |
| բարի | --------------------------- |
| ջանասեր | --------------------------- |